

Մեկիք Հայկազն իւր հովանաւորութեան տակ առած ըլլալով Մեծ Անապատն եւ անոր միարանները, պաշտպանեց զանոնք կաթողիկոսներու եւ անոնց համախոհներու ստնձգութիւններու առաջ: Առանց այսպիսի պաշտպանութեան կարելի չէր յուսալ, որ Անապատն ծաղկէր եւ բարգաւաճէր այն բաղմաշփոթ դարուն:

25. ԳՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱԾՆՈՒԹԻՒՆԸ ԺԵ. ԳԱՐՈՒՆ

Մեծ Անապատի հիմնարկութիւնը անպատահան կեանքի խիստ կարգով եւ օրէնքներով վերածնութեան արշալոյսի առաջին ճառագայթն էր, որ կը ծաղկէր Սիւնեաց բարձունքէն, լուսաւորելու սրտերը աստուածեղէն լուսով: Արդէն հաւաքուած էին հոն խումբ մը վանական կեանքի հետամուտներ, երբ հասաւ Մովսէս վարդապետ Մեծ Անապատը (1613):

Բաւական չհամարեցաւ Մովսէս, որ միարանները ապրին մէկ յարկին տակ տեսական կեանքի անձնատուր, այլ անհրաժեշտ տեսաւ, որ անոնք ծանօթանան նաեւ զբաղիտութեան, կրթուին եկեղեցական ուսումներով, ըլլալու գործնական կեանքի համար ալ ընդունակ գործիչներ: Եկեղեցին եւ վանքերը, որոնք լքուած էին, կը պահանջէին կրթուած եւ հոգեւոր հրահանգներով դաստիարակուած առաջնորդներ, իսկ ժողովուրդը կը կարօտէր կենդանի խօսքի եւ լուսամիտ հովիւներու,